ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 1/փ - 361

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

Երևան քաղաքի գլխավոր հատակագծում առանձին հողամասի նպատակային և գործառնական նշանակության փոփոխության վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ Երևան քաղաքի գլխավոր հատակագծում հետևյալ փոփոխությանը.

Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը	Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը
Երևան քաղաքի Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց N 2 հասցեում գտնվող 0.37873 հա մակերեսով 01-011-0554-0123 կադաստրային ծածկագրով և 0.11659 հա մակերեսով 01-011-0554-0065 կադաստրային ծածկագրով անտառի նշանակության հողերից (ըստ անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայականի՝ բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր)	Երևան քաղաքի Նոր Խարբերդի այգեգործական տարածք 2-րդ թաղամաս 28-րդ փողոց N 2 հասցեում գտնվող 0.37873 հա մակերեսով 01-011-0554-0123 կադաստրային ծածկագրով և 0.11659 հա մակերեսով 01-011-0554-0065 կադաստրային ծածկագրով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել հաշվի առնելով ՀՀ շրջակա միջավայրի նախարարության գրությամբ ներկայացված պահանջը (կցվում է):

4. Երևան քաղաքապետին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Երևան քաղաքի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել՝ Երևան քաղաքի հաստատված գլխավոր հատակագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

Հանձնաժողովի նախագահ՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի պարտականությունները կատարող		
		Դ.Գրիգորյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Լ.Առաքելյան

Երևան, «31» «հոկտեմբերի» 2025 թ.